

The article is devoted to the university of Tatev. In foundation of the university the great contribution of famous philosopher and teacher Hovhannes Vorotnetsi and his talented student Grigor Tatevatsi is highlighted in the article.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՈՃԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ա. Վ. ՂԱՎԹՅԱՆ

ԳՊՀ Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս

Գաղտնիք չէ, որ բոլոր դեպքերում էլ մարդկանց փոխհարաբերությունների վրա մեծ ազդեցություն է ունենում սեփական մտքերի, հուզական վիճակների ճիշտ արտահայտումը, ինչպես նաև՝ ուրիշի ճիշտ ընկալումը, որը հաղորդակցման հոգեբանության ուսումնասիրման հիմնական առարկան է: Սակայն այլ բնույթ ունի հաղորդակցումը ուսուցման և դաստիարակության գործընթացում:

Ուսուցիչների մի մասը, եթե չասենք մեծ մասը, դեռևս լավ չի պատկերացում կապը ուսուցման արդյունավետության և հաղորդակցական ընդհանուր կարողությունների և հատուկ կարողությունների ձևավորման միջև:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ուսուցիչները հաճախ չունեն տարրական գիտելիքներ հաղորդակցման կարողությունների վերաբերյալ, առավել ևս, չեն տիրապետում այն ձևերին ու մեթոդներին, որոնք անհրաժեշտ են դրանց ձևավորման համար:

Ընդհանուր առմամբ, մանկավարժական գործընթացը մարդկանց միջև հատուկ կերպով կազմակերպված հաղորդակցում է, որի ընթացքում փոխանցվում են գիտելիքներ, վերարտադրվում ու յուրացվում է պատմահասարակական փորձը՝ մարդկային գործունեության տարատեսակների յուրացման ընթացքում:

Այստեղից հետևում է, որ ուսուցման և դաստիարակության որակը ուղիղ համեմատական է ուսուցման գործընթացի մասնակիցների միջև հաղորդակցման որակի հետ: Որոշ հեղինակներ նշում են, որ **հաղորդակցական կարողություններն** անհրաժեշտ են մարդուն մտքերի հստակ արտահայտման կամ ուրիշի մտքերի ճիշտ ընկալման համար: Եվ պարզ է, որ դրանք ձևավորվում են արդեն դպրոցից, երբ տեղի է ունենում ուսումնական և դաստիարակչական նպատակադրմամբ հաղորդակցում ուսուցչի և աշակերտի միջև: Ուսուցման գործընթացում հաղորդակցական կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ գործնական ընդգրկում ունենա ուսուցման գործընթա-

ցում և ապահովվի նրա անընդհատ հաղորդակցումը գործընթացի մյուս մասնակիցների՝ ուսուցչի և դասընկերների հետ:

Հանրակրթական միջավայրում մանկավարժական հաղորդակցման հիմնական **սուբյեկտներն են** սովորեցնողն ու սովորողը: Նրանց միջև հաղորդակցումն ունի ֆիզիկական, սոցիալական, պատմական, հոգեբանական, մշակութային համատեքստեր¹:

Նկատենք, որ մեր օրերում ուսուցիչը աստիճանաբար տեղեկություն հաղորդողից վերափոխվում է ուսուցման գործընթացի կազմակերպչի: Ուստի, ուսուցչի և աշակերտի միջև հաղորդակցական դաշտը պետք է կրի որոշակի փոփոխություններ: Բացի այդ, ցանկացած հաղորդակցում ունի **հետադարձ կապ**, որը տեղեկատվություն ընդունողի արձագանքն է հաղորդված տեղեկության նկատմամբ և ցույց է տալիս դրա ընկալման աստիճանը:

Այս դատողությունների հիման վրա կարելի է որոշակիորեն սահմանել **մանկավարժական հաղորդակցումը**:

Մինչև վերջերս մանկավարժական հաղորդակցում էր համարվում ուսուցման և դաստիարակության նպատակով ուսուցչի և աշակերտի միջև կառուցվող խոսքային հաղորդակցումը: Սակայն, իր լայն իմաստով, այն ընդգրկում է բոլոր այն հաղորդակցման ձևերը, որոնց ընթացքում տեղի է ունենում ուսուցում, դաստիարակություն, ձևավորում և զարգացում: Այս առումով որպես մանկավարժական հաղորդակցում կարելի է դիտարկել և՛ ուսուցիչ-աշակերտ, և՛ ծնող-երեխա, և՛ դասախոս-ուսանող հաղորդակցումը, իսկ արդի ուսուցման համագործակցային մեթոդի արդյունավետության տեսանկյունից, նաև՝ ուսանող-ուսանող, աշակերտ-աշակերտ հաղորդակցումը: Այն մշանակալի է դառնում հատկապես այնպիսի խնդիրների լուծման ընթացքում, ինչպիսիք են առարկայական ուսուցումը, դաստիարակությունը՝ շփման և համատեղ գործունեության ընթացում:

Ըստ Վ. Ցելույկոյի՝ «Մանկավարժական հաղորդակցումը մասնագիտական հաղորդակցություն է ուսուցչի և աշակերտի միջև դասի ու արտադասարանական շփման ընթացքում, որն ունի որոշակի մանկավարժական գործառնություններ, ուղղված է բարենպաստ հոգեբանական կլիմայի ստեղծմանը, ուսումնական գործունեության և ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների լավացմանը՝ ուսումնական խմբի շրջանակներում:

Այլ կերպ ասած՝ այն հարաբերությունների հաստատման, կազմակերպման ու զարգացման, աշակերտի և ուսուցչի փոխըմբռնման ու փոխազդեցության բազմաբնույթ գործընթաց է, որը ծնվում է համատեղ գործունեության նպատակներից»²:

Հաղորդակցումը կայուն, բնածին և բնական վարքագիծ է և այն զարգանում է տարիքի հետ զուգընթաց: Մենք փորձում ենք շտկել մեր խոսքը, մշակել ժեստերը, փոխել վերաբերմունքը այն դեպքերում, երբ գտնվում ենք հաղորդակցական դաշտում: Իհարկե, տարբեր իրավիճակներում մենք դրսևորում ենք մեզ ոչ

¹ Այստեղ տեղին կլինի դիտարկել նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները՝ որպես ուսուցման սուբյեկտ և ուսուցիչ-համակարգիչ-աշակերտ հաղորդակցումը, սակայն, հոդվածի թեմայից չչեղվելու համար, դրան կանդադարձնանք մեկ այլ հոդվածում:

² **Целуйко В. М.** Психологические основы педагогического общения, М., Владос, 2007, стр. 32

միանշանակ: Կախված հաղորդակցության մեջ գտնվելու պահերին մեր ինքնաքննադատական վերաբերմունքից, հուզականորեն կառավարելի վիճակից, մենք կարողանում ենք շտկել, ձևավորել ու զարգացնել հաղորդակցումը, եթե տիրապետում ենք հաղորդակցական հմտությունների:

Հաղորդակցական իրազեկվածությունը և կարողության դրսևորումը արտահայտվում են այն ժամանակ, երբ մեր հաղորդակցական վարքագիծը համապատասխանում է հաղորդակցական իրավիճակին:

Մանկավարժական հաղորդակցման կարողությունների մեջ շատ հեղինակներ առանձնացնում են որակներ, որոնց առկայությունը անգնահատելի ու պարտադիր է աշակերտների հետ փոխհարաբերությունների ընթացքում: Վ. Ն. Շատալովը գտնում է, որ «Մանկավարժի հաղորդակցական կարողությունը ձեռք բերված արժանապատվության զգացում է, որի հիմքում ընկած են պատվի, խղճի, ծնարտության, մարդու և նրա կոչման մասին բարձր պատկերացումները: Արժանապատվության զգացումը չի կարող ծնվել հենց այնպես, ինքնաբերաբար: Այն աճեցվում է դպրոցական կյանքի յուրաքանչյուր սանտիմետրի վրա քրտնաջան աշխատանքի շնորհիվ՝ ուսուցչի և աշակերտի անընդհատ համագործակցության ընթացքում: Ուսուցչի ոչ մի գործողություն չի կարող ինչ-որ արժեք ունենալ, եթե ներշնչված չէ գլխավոր մանկավարժական նպատակով. մարդու արժանապատվության մասին հոգածությունը պետք է հաղորդակցության օղը լինի»³:

Մասնագիտական **մանկավարժական հաղորդակցական կարողությունները** Վ. Մ. Ցելուլյոն դասակարգել է երեք խմբով՝ **միջանձնային հաղորդակցական, միջանձնային փոխազդեցության և այլ մարդկանց ընկալման և հասկացման կարողություններ:**

Դրանց նկարագիրը տես աղյուսակում:

Հաղորդակցական հմտություններն արտահայտվում են, երբ մենք համապատասխան իրավիճակներում կարողանում ենք կրկնել կամ իրականացնել նպատակամղված, իմաստավորված և հաջորդական գործողություններ:

Որքան շատ հմտությունների ենք տիրապետում, այնքան մեծ է հավանականությունը, որ կկարողանանք արդյունավետ և իրավիճակներին համապատասխան կառուցել մեր հաղորդակցումը:

Քանի որ մանկավարժը հիմնականում հաղորդակցվում է իր սաների հետ, ապա այդպիսի հմտություններն առավելապես անհրաժեշտ են տարբեր իրավիճակներում՝ նրանց նկատմամբ ճիշտ վերաբերմունք դրսևորելու և արտահայտելու համար: Աշակերտները ենթագիտակցաբար ընկալում են մանկավարժի կիրառած բոլոր հաղորդակցական գործոնները և համապատասխան վերաբերմունքով արձագանքում դրանց: Ուստի այդ հմտությունների մշակման համար լավագույն ժամանակաշրջան կարող են դառնալ հենց բուհական ուսումնառության և մանկավարժական պրակտիկայի տարիները:

³ *Шаталов В. Ф.* Эксперимент продолжается, М., 1989, стр. 289.

Միջանձնային հաղորդակցական կարողություններ	Միջանձնային փոխազդեցության կարողություններ	Այլ մարդկան ընկալման ու հասկացման կարողություններ
Հաղորդել ռացիոնալ և հուզական տեղեկություններ օգտագործել բոլոր խոս- քային և ոչխոսքային հաղոր- դակցման միջոցները կազմակերպել և կառավա- րել երկխոսություններ լինել ակտիվ լսող	Կազմակերպել սովորող- ների համատեղ գործունեու- թյուն կառավարել խմբային դի- նամիկան զբաղեցնել համապատաս- խան դերակատարում սովորողներին հոգեբանա- կան աջակցություն ցույց տալ ցուցաբերել կառուցողա- կան գիշողականություն մանկավարժական բա- խումներին տալ կառուցողա- կան լուծում	Կողմնորոշվել հողորդակ- ցական իրավիճակներում հասկանալ գրուցակցի հուզական վիճակը ճանաչել թաքնված դրդա- պատճառներն ու հոգեբանա- կան պաշտպանության միջոց- ները կատարել սոցիալական ռեֆլեքսիա

Հաղորդակցման արդյունավետության պայմաններից են մասնակիցների իրար հետ շփվելու, կապեր ստեղծելու ընդունակությունը, հաղորդակցական համատեղելիությունը և հարմարվածությունը (ադապտիվությունը):

Տարբեր իրավիճակներ թելադրում են վարքագծի որոշակի ոճեր, և տարբեր իրավիճակներում մարդիկ իրենց դրսևորում են տարբեր կերպ: Եթե մարդու ինք-
նադրսևորումը չի համապատասխանում իրավիճակին, այն դժվարեցնում է հա-
ղորդակցումը:

Հաղորդակցության արդյունավետության ապահովման գործում կարևոր նշա-
նակություն ունեն մաև հաղորդակցման ոճի դրսևորումները:

Հաղորդակցման ոճը մարդու վարքագծի անհատական կայուն ձև է, որը
դրսևորվում է փոխգործողության բոլոր պայմաններում՝ անձնական ու գործա-
րար հարաբերություններում, սոցիալական դերերի իրականացման ընթացքում:
Հաղորդակցման ճկուն ոճի առկայությունը վկայում է մարդու հաղորդակցական
կարողության բարձր մակարդակի մասին: Հաղորդակցական ոճի ձևավորման
վրա իր ազդեցությունն են թողնում մասնագիտությունը, խառնվածքը, սոցիալա-
կան իրադրությունը, սեռը, տարիքը և այլն: Հաղորդակցական ոճերի առաջին
փորձագիտական հետազոտությունները կատարվել են դեռևս 1938թ. գերմանա-
ցի հոգեբան Կուրտ Լեվինի կողմից:

Հաղորդակցման ոճերը կարող են լինել **ճկուն, ռիգիդ, գործընկերային և ոչ-
գործընկերային, ավտորիտար և դեմոկրատական, ակտրուիստական և մա-
նիպուլյատորական** և այլն: Մանկավարժական պրակտիկայում հիմնականում
առնչվում ենք ավտորիտար և դեմոկրատական ոճերի հետ: Սակայն արդյունա-
վետության տեսանկյունից մանկավարժին պետք է բնորոշի ճկուն ոճը, քանի որ
մանկավարժը անընդհատ գտնվում է տարբեր սոցիալական դերակատարում ու-
նեցող անձանց և երեխաների հետ հաղորդակցման միջավայրում: **Ճկուն ոճ** ու-
նեցողները փոխգործողության մեջ կողմնորոշվում են արագ, հասկանում են հա-

ղորդակցման ենթատեքստը, կարողանում են տիրապետել իրենց զգացմունքներին: **Ռիզիկո ոճ** ունեցողները չեն կարողանում բավարար չափով վերլուծել սեփական և ուրիշի վարքագիծը, ունեն ոչադեկվատ ինքնագնահատական: **Գործընկերային ոճը** նշանակում է համագործակցության ու փոխըմբռնման, հանդուրժողականության բարձր մակարդակ: Ընդհակառակը, ոչ գործընկերային հաղորդակցական ոճը ստեղծում է լարվածություն, որը դրսևորվում է տարբեր կերպ (գրուցակցի տեսակետի արհամարհում, նրա մտքերի աղավաղում, անձի վիրավորում, ստորացում, ուրիշի վզին սեփական խնդիրների, հոգսերի փաթաթում և այլն): Ինչ որ առումներով համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների հիմքում ընկած է ուսուցիչ-աշակերտ գործընկերային հաղորդակցումը, որտեղ նրանք, փոխհամաձայնության միջոցով, համատեղ ջանքերով շարժվում են ուսուցման նպատակների իրականացման ուղղությամբ:

Հաղորդակցման **դեմոկրատական ոճի** ժամանակ խրախուսվում են շփումները, ստեղծագործությունն ու նախաձեռնությունը, հավասարապես բաշխվում են պարտականություններն ու պատասխանատվությունը, որոշումները ընդունվում են համատեղ քննարկման արդյունքում: Յուրաքանչյուրը ձգտում է առավել նպաստավոր պայմաններ ստեղծել մյուսների գործունեության համար: Մանկավարժական գործընթացում դեմոկրատական ոճը բնորոշվում է ուսուցչի օբյեկտիվ, հարգալից վերաբերմունքով աշակերտի նկատմամբ, յուրաքանչյուրի անհատական հատկանիշների, պահանջմունքների և անձնական փորձի հետ հաշվի նստելու ձգտումով: Նրա խոսքային վարքագծին բնորոշ են ճկունությունը, կարծրատիպերի բացակայությունը:

Դրա հակառակ նկարագիրն ունի հաղորդակցման **ավտորիտար ոճը**: Այն խանգարում է հաղորդակցվողների միջև շփումների ընդլայնմանը. մեկը փորձում է հրամայել, կարգադրել, որոշումները ընդունել միայնակ, իր կարծիքը պարտադրել ուրիշներին, հոգեբանական պատնեշ ստեղծել իր և այլոց միջև: Այդպիսի մարդը կասկածանորեն է տրամադրված գործընկերների հանդեպ, նրանց խրախուսելու փոխարեն փնտրում է թերություններ և այլն: Այդ ոճի հիմքում ընկած է ուրիշների հանդեպ գերազանցության զգացումը, ինքնավստահությունը, անսխալականությունը, այլ մարդկանց հոգեբանությունը հաշվի չառնելը, ուշադրության կենտրոնում լինելու և ուրիշներին իրենից կախվածության մեջ պահելու ցանկությունը:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում այս դեպքում գերակշռում են գործնական մոտեցումը, հստակ, երբեմն խիստ արտահայտված ցուցումները, պահանջները, որոնց հիմքում դրված են աշակերտի նկատմամբ «միջինացված» պատկերացումները: Որպես կանոն այսպիսի ուսուցիչը կառավարվում է հնարավորությունների գնահատման ընդունված կարծրատիպերով:

Համաձայնեք, որ արդի պայմաններում սովորողների հետ հաղորդակցման մեջ այս ոճի գերակայությունը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում, որն էլ կարող է խոչընդոտել ուսուցման արդյունավետությանը: Ուստի, մասնագետների կողմից խորհուրդ է տրվում այս ոճի ընտրության հարցում լինել ավելի ուշադիր և պահպանողական:

Ծիսական ոճը հիմնականում թելադրվում է այն մշակույթով, որտեղ ապրում է մարդը: Ծիսական կարող են լինել ողջունելու, հարց տալու, պատասխանելու

և հրաժեշտ տալու ձևերը: Օրինակ՝ ամերիկյան մշակույթում, իրականում ինչ կարգավիճակում էլ լինեն մարդիկ, «Ինչպե՞ս ես» հարցին ընդունված է պատասխանել «Հիանալի»:

Հայկական մշակույթում նույն հարցին առանց խորը մտածելու տրվում է «Ոչինչ» պատասխանը, որն իրականում չի ենթադրում բառացի իմաստ, այլ նշանակում է «ոչ լավ, ոչ վատ»:

Նույն կերպ մեր մշակույթին հատուկ է ուսուցիչների նկատմամբ որոշակի վերաբերմունքների ու խոսելաոճի կարծրատիպերը, որոնք շատ անգամ արդեն հասկանալի ու ընդունելի չեն լինում ժամանակակից աշակերտների կողմից, քանի որ նրանք առնչվում են այլ մշակութային օրինակների և ավելի հակված են դրանք ընդունելուն: Եթե նախկինում ծիսական ոճի մեջ ընդունված էր ուսուցիչի հետ խոսել շատ զուսպ, չափավոր, ապա քաղաքակիրթ մշակույթներում ուսուցիչը կարող է աշակերտի հետ շփվել մարդ-մարդ մակարդակի վրա և դա չի դիտվում տարօրինակ: Ցանկալի է դաստիարակչական գործընթացում խուսափել այս ոճի չարաշահումներից, որպեսզի հնարավոր լինի հաղորդակից լինել միմյանց և փոխազդել:

Իմպերատիվ ոճը ավտորիտար, դիրեկտիվ ձևի փոխազդեցությունն է: Այս ոճի նպատակը ուրիշի վարքի վրա իշխելու, կառավարելու ձգտումն է, որպես միջոց կարող են դառնալ հրամանները, ցուցումները: Այս ոճը հիմնականում հանդիպում է ղեկավար-ենթակա հաղորդակցման մեջ: Այն ևս ցանկալի ու անարդյունավետ է, քանի որ ընկած է այնպիսի հաղորդակցական մոդելների հիմքում, ինչպիսիք են «Մոմբլանն» ու «Զինական պատը»:

Մանիպուլյատիվ ոճի դեպքում ազդեցությունը թաքնված է (լատենտ), կամ՝ փոխարինված: Նպատակը նույնն է՝ ինչ իմպերատիվում, մի տարբերությամբ՝ իշխելու այլ մարդու մտքերի և գաղափարների վրա՝ առանց նրա գիտակցության: Իհարկե, այս ոճի դեպքում խախտվում են ուսուցման գիտակցականության ու ակտիվության սկզբունքները:

Բացի դրանցից գոյություն ունեն մաս **ապակառուցողական** (դեստրուկտիվ) հաղորդակցման ձևեր, որոնք բացասաբար են ազդում հաղորդակցվողների վրա՝ բարդացնելով նրանց փոխհարաբերությունները: Այդպիսի հաղորդակցման ձևերը շահադիտական ու շահամոլական բնույթ ունեն: Դրանց ժամանակ հաղորդակցվողները դիմում են կեղծիքների, խաբեությունների, խորամանկությունների, տարբեր կարգի մանիպուլյացիաների: Ապակառուցողական բնույթ ունի մաս ագրեսիվ-կոնֆլիկտային հաղորդակցումը, որի դեպքում տուժում և հոգեկան լարվածության մեջ են հայտնվում հաղորդակցության բոլոր մասնակիցները:

Մանկավարժական հաղորդակցման առանձնահատկությունը պայմանավորված է դրա սուբյեկտների տարբեր սոցիալ-դերային և գործառնական դիրքերով, որտեղ ուսուցիչը ուղղակի կամ անուղղակի ձևով իրականացնում է ուսուցման և դաստիարակության գործընթացի ղեկավարման իր սոցիալ-դերային և գործառնական պարտականությունները: Հաղորդակցման ոճը որոշիչ նշանակություն ունի ուսուցման և դաստիարակության գործընթացի արդյունավետության, ինչպես մաս անձի ձևավորման, խմբում միջանձնային հարաբերությունների հաստատման որակի վրա:

Դասի ժամանակ մանկավարժը պետք է տիրապետի մանկավարժական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ մշակույթի, լինի հնարավորինս նրբանկատ չնչին իսկ փոփոխությունների նկատմամբ, անընդհատ համապատասխանեցնի մանկավարժական ներգործության այն մեթոդներին, որոնք նպատակահարմար է կիրառել տվյալ իրավիճակին համապատասխան: Այս ամենը մանկավարժից պահանջում է միաժամանակ լուծել երկու խնդիր.

1. կառուցել երեխաների հետ հաղորդակցման վարքագծի անհատական մոտեցումներ (մանկավարժական անհատականություն), այսինքն՝ անհատական ոճ,

2. մշակել հաղորդակցական ներգործության արտահայտիչ միջոցների անձնական համակարգ:

Վերջինս անընդհատ կարող է փոփոխվել՝ կախված մանկավարժական իրավիճակում ծագած խնդիրների բնույթից:

Մանկավարժական հաղորդակցման ոճերի նկարագրման համար դիտարկվում են մանկավարժական գործունեության հետևյալ բաղադրիչները.

1. ուսուցչի և երեխայի միջև ձևավորված հարաբերությունների ընդհանուր համակարգը,

2. մանկավարժական գործընթացի տվյալ փուլին բնորոշ հաղորդակցության համակարգը,

3. մանկավարժական իրավիճակներում ծագած խնդիրների լուծման ժամանակ բնորոշ հաղորդակցության համակարգը:

Մանկավարժական հաղորդակցական ոճում արտահայտվում են.

- *ուսուցչի հաղորդակցական հնարավորությունների առանձնահատկությունները,*

- *մանկավարժի և նրա սաների միջև ստեղծված փոխհարաբերությունները,*

- *մանկավարժի ստեղծագործ անհատականությունը,*

- *աշակերտական կոլեկտիվի առանձնահատկությունները [4, 6]:*

Ընդհանուր առմամբ տարբերակվում են գործունեության մի քանի ոճեր, որոնց շարքում կառանձնացնենք նրանք, որոնք առավել բնորոշ են ժամանակակից ուսուցիչներին:

Վ. Ա. Կան-Կալիկը տալիս է հաղորդակցման վարքագծի հետևյալ բնորոշումները.

- **«հաղորդակցում-վախեցնող**, երբ ուսուցչի հեղինակությունը պահվում է ներշնչվող վախով;

- **հաղորդակցում-դերախաղ**, երբ ուսուցիչը ձգտում է դուր գալ աշակերտին՝ չպահպանելով իր և աշակերտի միջև անհրաժեշտ սահմանը (դիստանցիան);

- հաղորդակցում հստակ սահմանազատումով;

- ընկերական հաղորդակցում;

- համատեղ ուսումնական գործունեության նպատակաուղղված հաղորդակցում»⁴:

Սահմանազատումները կարող են առաջանալ երբ.

⁴ **Кан-Калик В. А.** Учителю о педагогическом общении, М., 1987.

1. մանկավարժն ընդգծում է իր առավելությունը աշակերտի նկատմամբ;
2. գերակշռում է տեղեկատվության հաղորդման ձգտումը, այլ ոչ սովորեցնելու;
3. բացակայում է համագործակցությունը;
4. մանկավարժը զիջող-խնամակալ է, որը խանգարում է հասուն հաղորդակցության ձևավորմանը:

Ավտորիտար ոճի նկատմամբ չափավորությունը չի ենթադրում, որ խստություն ու պահանջկոտություն պետք չէ կիրառել. դրանք պետք չէ նույնականացնել և շփոթել, դրանք կարող են լինել ուսուցչի անձնային որակներ, այդ դեպքում աշակերտը հեշտությանմբ է կատարում նրա պահանջները՝ եթե զգում է համագործակցության հետաքրքրվածություն:

Ընկերական հաղորդակցում կամ դերախաղ ձևերում հիմնականում հայտնվում են թույլ մանկավարժական հմտությունների տեր ուսուցիչները, որոնք վախենում են չտիրապետել իրավիճակին, փորձում են լավ հարաբերությունների միջոցով ուսուցման ցանկություն առաջացնել: Երեխաները շատ արագ են զգում այդպիսի վարքագծի ներքին պատճառները: Ըստ էության մեծանահաղորդակցման ոճը համապատասխանում է նրանց, ովքեր ցանկանում են կեղծ, «չվաստակած» հեղինակություն ձեռք բերել, որը հակասում է մանկավարժական էթիկայի կանոններին: Այն հաճախ նաև մանկավարժական անփորձության դրսևորում է:

Ա. Մակարենկոն խիստ քննադատում էր «երեխաների սիրո համար մրցավազքը»: «Ես շատ հարգում էի իմ օգնականներին, իսկ նրանք պարզապես համճարներ էին դաստիարակության գործում, բայց ես նրանց համոզում էի, որ ամենաքիչ բանը, որը պետք է ցանկանալ, իրենց սաների կողմից սիրված լինելն է: Ես անձամբ երբեք չեմ ձգտել վաստակել երեխաների սերը, համարում եմ, որ այն մանկավարժի կողմից նախաձեռնվում է անձնական հաճույքի համար. սա հանցագործություն է: Նման ցուցամոլությունը, սիրված լինելու առիթով գլուխգոլանությունը մեծ վնաս են թե՛ դաստիարակի, թե՛ դաստիարակվողի համար: Ես համոզվել եմ ինքս ինձ և իմ ընկերներին, որ այն ավելորդ է մեզ համար... Թող սերը գա աննկատ, առանց ձեր ջանքերի: Իսկ եթե այդ է նպատակը, ապա այն շատ վնասակար է»⁵:

Համատեղ ուսումնական գործունեության նպատակաուղղված հաղորդակցման ձևերը դեռ չեն նշանակում, որ ուսուցիչը պետք է իջնի աշակերտի մակարդակին: Սա նշանակում է, որ նրանք երկուսն էլ «մարդ», մակարդակի վրա են:

Պետք է փաստենք, որ մաքուր հաղորդակցական ոճ պրակտիկայում գրեթե չի հանդիպում: Սակայն դրանց այս կամ այն տեսակի գերակշռումով է պայմանավորվում մանկավարժի անհատական հաղորդակցական ոճը, հետևաբար նրա գործունեության և հաղորդակցման որակը: Անհատական ոճի ձևավորումը չի կատարվում անմիջապես, այն ձևավորվում է երկարատև պրակտիկ գործունեության ընթացքում, իհարկե՝ եթե մանկավարժը դրսևորում է ինքնավերլուծություն, ինքնաքննադատություն, անընդհատ աշխատում է իր դրական հատկա-

⁵ **Бадмаев Б. Ц.** Психология в работе учителя, М., 2000.

նիշների զարգացման ու բացասականների վերացման վրա: Ոճի դրական ու բացասական դրսևորումների մասին է խոսում սովորողների վերաբերմունքը մանկավարժի և նրա կողմից դասավանդվող առարկայի նկատմամբ:

Տեսական գիտելիքների իմացությունը չի կարող ամբողջացնել մանկավարժական հաղորդակցման էությունը, քանի որ մանկավարժի հաղորդակցական անձնական ոճի ձևավորումը տեղի է ունենում մասնագիտական գործունեության, ինքնավերլուծության կարողության զարգացման որոշակի մակարդակներում: Այդ դեպքում է, որ նա երեխաների հետ փնտրում է փոխազդեցություն, կուտակում հաղորդակցման միջոցների և հնարների մեծ «գինանոց», որոնք էլ ապահովում են երեխայի անձնական առանձնահատկությունների համապատասխան առավելագույնս արդյունավետ հաղորդակցում: Այն իր հերթին հանգեցնում է հուզական բավարարվածության և հոգեբանական հարմարավետության և, ժամանակի ընթացքում, ձևավորվում է հուզական կայունություն հաղորդակցական տարբեր իրավիճակներում⁶:

Մանկավարժական հաղորդակցման արդյունավետությունը մեծապես կախված է մանկավարժի կողմից հաղորդակցման բոլոր բաղադրիչների ճիշտ և ներդաշնակ համադրման կարողությունից: Իսկ ընտրություն կատարելիս նա պետք է առաջնորդվի երեխայի անհատական դրդապատճառների, իրավիճակի օբյեկտիվ վերլուծության և չվնասելու սկզբունքներով, որն էլ բնականաբար կարևոր պայման է մանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա.** Մանկավարժական հաղորդակցում, Ուս. ձեռն., Եր., 2010
2. **Целуйко В. М.** Психологические основы педагогического общения, М., Владос, 2007, стр. 32
3. **Шаталов В. Ф.** Эксперимент продолжается, М., 1989, стр. 289
4. **Бадмаев Б. Ц.** Психология в работе учителя. М., 2000
5. **Кан-Калик В. А.** Учителю о педагогическом общении, М., 1987
6. **Морева Н. А.** Основы педагогического мастерства, М., 2006

ВЛИЯНИЕ СТИЛЯ ПЕДАГОГИЧЕСКОГО ОБЩЕНИЯ НА ЭФФЕКТИВНОСТЬ УЧЕБНО-ВОСПИТАТЕЛЬНОГО ПРОЦЕССА

А. В. ДАВТЯН

Рассматривается изменение роли современного учителя, как субъекта учебно-воспитательного процесса и стиль педагогического общения, как важные компоненты эффективности педагогического воздействия.

⁶ **Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դավթյան Ա.** Մանկավարժական հաղորդակցում, Ուս. ձեռն., Եր., 2010թ:

INFLUENCE OF STYLE OF PEDAGOGICAL DIALOGUE ON EFFICIENCY OF TEACHING AND EDUCATIONAL PROCESS

A. V. DAVTYAN

As an important components of efficiency of pedagogical influence, the change of a role of the modern teacher as a subject of teaching and educational process and style of pedagogical dialogue is taken under consideration.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶԱԿԱՆ ԹԱԹԱՊԱՆԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔ

Է. Ֆ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Վ. Բրյուսովի անվ. ՀԳԼՀ ՕԼՖ-ի դասախոս

Կրթության արդի պայմաններում հանրակրթության տարբեր աստիճաններում օտար լեզուների ուսուցումը հետապնդում է տարբեր դաստիարակչական և կրթական նպատակներ: Այսպես՝ ուսումնառության տարրական աստիճանում գլխավոր խնդիրն է խրախուսել աշակերտի հետաքրքրությունը, հզորացնել դրդապատճառը: Ենթադրվում է, որ դաստիարակչական իմաստը ամփոփում է լեզուն սովորելու գործընթացի, օտար լեզուն ու մշակույթը կրողների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում: Այդ նպատակով, ուսուցման մեթոդների ընտրությունը ենթադրում է համապատասխանեցում աշակերտների կազմախոսական ու հոգեբանական զարգացման յուրահատկություններին: Մեթոդների ընտրությամբ անհրաժեշտ է ապահովել.

- կրտսեր դպրոցականի մտավոր և հուզագգայական ներուժի ակտիվացումն ու զարգացումը (ըմբռնում, հիշողություն, երևակայություն, պատկերացում, բազմաբնույթ մտածողություն և այլն),

- դրական վերաբերմունքի ձևավորում սեփական անձի, ուրիշների, ուսումնառության, առարկայի, օտար երկրների ու ժողովուրդների նկատմամբ,

- գործնական կարողությունների և հմտությունների զարգացում, որոնցից ուսումնառության այս փուլում առաջնային է կամքի ուժը, ուշադրության կենտրոնացումը, կանոնների պահպանումը և հարգանքը, ուսումնական առարկաների նկատմամբ գործունեության կարգավորումը, համագործակցությունը (զույգերով, խմբային աշխատանք, փոխադարձ աջակցություն), ստեղծագործականությունը:

Ժամանակակից կրթակարգում ամփոփված օտար լեզուների չափորոշիչները հիմնված են լեզուների համաեվրոպական չափանիշների վրա: Դրանք ամբողջ-